



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 օգոստոսի 2019 թվականի թիվ 93-Ա
ք. Երևան

«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՄՈՒՍԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԼԱՅՔՆԵՏ» ՍՊ ընկերության հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու մասին 2019 թվականի հուլիսի 1-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Մերժել «ԼԱՅՔՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը՝ հետևյալ պատճառներով.

1) Պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերից ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվել, իսկ աշխատակազմի թվաքանակի, կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին տվյալները թերի են:

2) Գործարար ծրագրում Ընկերությունը հանձն է առնում կաբելային հեռարձակման ցանցի շահագործումը կազմակերպել այնպես, որ «ՄՊԸ-ն գրավի իր ուրույն և հեղինակավոր տեղը», «ապահովվի բարձր վարձատրվող աշխատատեղեր» «ապահովվի եկամուտների կայուն աճ» և այլն, սակայն կատարված ենթադրություններն ու

կանխատեսումները հիմնավորված չեն ելակետային տվյալներով, կոնկրետ հաշվարկներով և վերլուծություններով:

3) Բիզնես ծրագրում բացակայում են որոշակի ժամանակահատվածի համար կանխատեսված եկամտի և դրամական հոսքերի վերաբերյալ հաշվարկներ՝ բաժանորդների փուլային ներգրավման գործընթացի կանխատեսումը, այդ փուլերին համապատասխան կատարվելիք ծախսերը և ակնկալվող եկամուտները, Ընկերության կողմից նախատեսված բաժանորդավճարի հետ կապված ծախս-եկամուտ հարաբերակցության վերլուծությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԼԱՅՔՆԵՏ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալու օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ